ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ «Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը գրականության դասերին»

Կազմեց՝ Լուսինե Ղարիբյան

Դպրոց՝ «Ազարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան.....3
2. Գրականության ակնարկ.....5
3. Հետազոտության գործնական համատեքստ.....6
4. Դասարանի կազմը և բնութագիրը.....6
5. Հետազոտական դասերի ձևաչափը.....8
6. Եզրակացություն.....20
7. Գրականություն.....21
8. Հավելված 1.....22
9. Հավելված 2……..26
10. Հավելված 3……..27

1.ՆԱԽԱԲԱՆ

Ակնհայտ է, որ աշխարհում տեղի ունեցող արագընթաց զարգացումները թելադրում են իրենց պահանջները կյանքի բոլոր ոլորտներին: Անկախ նրանից, թե որտեղ են ապրում մերօրյա երեխաները, նրանք ամբողջ կյանքի ընթացքում պետք է պատ-րաստ լինեն ընդունելու ժամանակի մարտահրավերները, արձագանքելու հասա-րակական, քաղաքական և միջավայրի փոփոխություններին:Այդ է պատճառը, որ այսօրվա սովորողը ավելի պահանջկոտ է դարձել կրթության նկատմամբ, այն կրթության, որը պայմանավորված է ուսուցման կազմակերպման նոր մոտեցումների ներդրման անհրաժեշտությամբ: Փոխվելեն այսօրվա աշակերտի սկզբունքներն ու դիրքորոշումը: Փաստ է, որ առնչվում ենք նոր արժեքային համակարգ ունեցող աշակերտի հետ, որի հայացքներն այլ են:

«Հայ գրականություն» առարկայի ուսուցումն էական նշանակություն ունի սովորողների մտահորիզոնի, աշխարհայացքի և ստեղծագործական ունակությունների զարգացման գործում, քանի որ սա այն առարկան է,որ խիստ առնչվում է արժեհամակարգի հետ: Հայ գրականության ճիշտ ուսուցմամբ սովորողի մեջ արթնանում է սեր ազգային արժեքների նկատմամբ, ձևավորվում ազգային ճաշակ, ազգային գիտակցություն: Այն նպաստում է անհատի բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորմանը: Բացի նրանից, որ հանրակրթական դպրոցի սովորողը պետք է կարողանակարդալ և համարժեքորեն ընկալել գրական ստեղծագործությունը, վերլուծել, մեկնաբանել, ընկալել երկի կառուցվածքը, ներկայացնել ստեղծագործության հիմնական գաղափարը, հերոսներին, վերլուծել կերպարները, արտահայտել իր վերաբերմունքը ստեղծագործության գաղափարական ու գեղարվեստական արժանիքների վերաբերյալ, զուգահեռներ անցկացնել հեղինակների կյանքի, ապրած ժամանակաշրջանի և նրանց ստեղծագործությունների գաղափարական բովանդակության միջև, տեսնել ստեղծագործության մեջ արտահայտված գաղափարների արդիական հնչեղությունը, անցյալի և ժամանակակից կյանքի ներքին կապը[1]: Նյութի խոր իմացությամբ պետք է

[1] Ն Տողանյան, Թ. Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցչի համար, Երևան, 2012, էջ 49:

կարողանա հասնել ազգային ինքնաճանաչողության,տեսնի սեփական ազգի մարդասիրական առաքելությունը: Ուստի արդիական պահանջ է առաջանում դասի ընթացքում կիրառել բազմազան ու հետաքրքիր մեթոդներ, մշակել նոր ու բազմակողմանի մոտեցումներ՝ ուսուցման ժամանակակից պահանջներին համապատասխան:

Հետազոտողի տեսակետը հետևյալն է. ուսուցման պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նորագույն մեթոդների կիրառումով: Գրականության նյութը ուսումնառության ակտիվ մեթոդների ճիշտ կիրառմամբ ու դասավանդման նոր մոտեցումներով ուսումնասիրելը հնարավորություն է տալիս լուծելու ոչ միայն ուսումնական,այլև դաստիարակչական խնդիրներ, այն է՝ ձևավորել արժեհամակարգ,աշխարհայացք, մանավանդ եթե թեման արդիական է մեր օրերում և վեր է հանում այնպիսի գաղափարներ,ինչպիսիք են հայրենիքի պաշտպանությունը,սահմանների ամրապնդումը,խաղաղ աշխատանքի հավերժական ձգտումը,ազգային ինքնաճանաչողության ընկալումը և այլն:

Կատարել եմ հետազոտական աշխատանք ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտների շրջանում՝ ընտրելով «Սասնա ծռեր» էպոսը թեման:

«Սասնա ծռեր» էպոսի քննությունը արդիական նշանակություն ունի,քանի որ հնարավորություն է տալիս արդիական չափանիշներով վերլուծելու ազգային բազմաթիվ հարցեր՝նպաստելով հայրենասիրական դաստիարակության ամրապնդմանը:

Նպատակը և խնդիրները որոշում են հետազոտության հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել հետազոտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականությունը և ներկայացնել այնտեղ արծարծված սկզբունքները;
2. Մշակել ընտրված թեման ուսումնառության ակտիվ մեթոդների կիրառմամբ ուսումնասիրելու դասապլաններ այն առավել ընկալելի և արդյունավետ անցկացնելու համար:
3. Անցկացնել դասեր ավանդական ու նոր մոտեցումներով:
4. Վերլուծել ու գնահատել դասերի արդյունավետությունը:

Ավագ դպրոցի աշակերտը միջին դպրոցից արդեն ունի որոշակի գիտելիքներ այս թեմայի վերաբերյալ, ուստի ուսուցման խնդիրներն ու պահանջներն ավելի լայնածավալ են ու ընդգրկուն: Ուսուցչի համարարդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է. ու՞ր ենք ուզում հասնել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով: Էպոսի ուսուցումը հնարավորինս արդյունավետ և լիարժեք կազմակերպելու համար 6 դասաժամ է հատկացված, ինչը օգնում է ուսուցչին քայլ առ քայլ հասնել առավելագույն արդյունքի:

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Գրականությունը ոչ միայն գեղագիտական հաճույքի աղբյուր է,այլև սերնդի աշխարհայացքի ձևավորման,հոգևոր հարստացման և ինքնուրույն մտածողության ու հետազոտական ունակությունների զարգացման անփոխարինելի միջոց: Ուստի այլևս անկարելի է գլխավոր շեշտը դնել փաստերի որոշակի քանակի յուրացման վրա, այլ կարևոր է սովորողների կողմից իրենց գիտելիքներն ինքնուրույն համալրելու ունակության պատվաստումը: Եվ եթե նախկինում մեթոդների դասակարգման համար հիմք էր ընդունվում գիտելիքի աղբյուրը, ապա այժմ հիմք է ծառայում գիտելիք ձեռք բերելու գործընթացում սովորողի ինքնուրույնության աստիճանը, որը կարելի է իրականացնել ուսումնառության ակտիվ մեթոդներով[2]: Գոյություն ունեն տարբեր գնահատականներ այս հարցի վերաբերյալ, թե ինչ կարևորություն ունի ակտիվ մեթոդների կիրառումը աշակերտների համար: Օրինակ՝Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Եվ ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ ծրագրային նոր պահանջների արդյունավետ իրագործման համար: Այսինքն՝ուսուցման պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նոր մոտեցումներով: Այլևս գաղտնիք չէ, որ ուսուցման ավանդական մեթոդները այսօր չեն կարող ապահովել նոր չափորոշչով սահմանված կարողունակությունների զարգացում և ուսման որակ:

[2] Հայոց լեզու և գրականություն ամսագիր, հ 3,1983, էջ 59

Բացի դասի նպատակից ու խնդիրներից մեթոդների ընտրությունը կախված է դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների թվաքանակից, ուսումնադիտողական պարագաների առկայությունից, ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից[3]:

3.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

3.1 Դասարանի կազմը և բնութագիրը

10բ դասարանում սովորում է 25 աշակերտ /12 տղա, 13 աղջիկ/՝ տարբեր կարողություններով, հմտություններով ու ունակություններով օժտված: Սակայն աշակերտների զգալի մասը նպատակասլաց է, աշխատասեր, պահանջկոտ սեփական անձի նկատմամբ՝ մշտապես ձգտելով ինքնակատարելագործման ու նոր գիտելիքներ ձեռք բերելուն: Սակայն այս աշակերտների կողքին սովորում են նաև աշակերտներ, որոնք առարկայի նկատմամբ հետաքրքրություն չունեն և բնավ ցանկություն չունեն ներգրավվելու դասապրոցեսին:

Այս դասարանի աշակերտներն ունեն հետևյալ առաջադիմությունը՝ ըստ 9-րդ դասարանի ամփոփիչ գնահատականների:

Գծապատկեր 1



Անկախ նրանից, թե ինչ կարողություններ և ունակություններ ունի աշակերտը, ուսուցիչը աշակերտին պիտի զինի այնպիսի արժեքներով, հմտություններով,

[3] Ա.Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան,Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, Կրթությանազգային ինստիտուտի հրատ., 2004, 178 էջ:

գիտելիքով ու քննադատական մտածողությամբ, որոնք անհրաժեշտ են հասարակական կյանքին ակտիվ մասնակցելու համար: Սովորողը պիտի ունենա հավատ սեփական ուժերի և վստահություն սեփական հնարավորությունների և ընդունակությունների հանդեպ: Իսկ ուսուցչից պահանջվում է ճանաչել սովորողներից յուրաքանչյուրին՝ խնդիրն առաջին հերթին ուղղելով սովորողի անհատականության զարգացմանը, նրա հետաքրքրությունների խթանմանը:

Մինչ հետազոտական աշխատանք կատարելը նախ փորձել եմ գնահատել բոլոր աշակերտների մասնակցությունը գրականության դասաժամերին՝ օգտվելով մասնակցության գնահատման չափանիշներից:

Աղյուսակ 1

Կատեգորիա	**3 աշակերտ 1-3 միավոր**	**9 աշակերտ 4-6 միավոր**	**11 աշակերտ 7-8 միավոր**	**4 աշակերտ 9-10 միավոր**
Վերաբերմունք դասի նկատմամբ	Ակտիվություն չի ցուցաբերում, մշտապես բողոքում է :	Փորձում է ուշադիր լինել, աշխատել, բայց ոչ միշտ է ստացվում:	Հիմնականում աշխատում է, երբեմն ուղղորդման կարիք ունի:	Օրինակելի է, միշտ դրական վերաբերմունք ունի:
Մասնակցություն	Անուշադիր է դասի ընթացքում: Պասիվ է :	Որոշակի ջանքեր է գործադրում մասնակցութ-յունն ապահովելու համար:	Հաճախ է դրսևորում ակտիվ մաս-նակցություն, որ հասնի նպատակին:	Դրսևորում է ակտիվ ու որակյալ մասնակցությ ուն:
Համագործակցա-յին հմտություններ	Չի համագործակ ցում իր կամքով:	Երբեմն մասնակցում է խմբային աշխատանք ներին:	Հաճախ համագործա կցում է՝ հետևելով կանոններին:	Մշտապես համագործա-կցում է՝ դրսևորելով նախաձեռնո-

				ղականություն
Պատրաստվածություն և պատասխանատվություն	Հանձնարարված առաջադրանքը չի կատարում:	Հանձնարարված առաջադրանքը կատարում է բացթողումներով ու թերություն ներով:	Կատարում է առաջադրանքը, երբեմն ուղղորդման կարիք ունի:	Առաջադրանքը կատարում է անթերի, օգնում ընկերներին՝ լրացումներ անելով:

3.2 Հետազոտական դասերի ձևաչափը

Մշակվել են 6 դասապլաններ /2 դասապլան ներկայացված է հավելված 1-ում/՝ կիրառվելով ավանդական և նոր մոտեցումներ: Հետազոտական աշխատանք կատարելու և արդյունքները համադրելու ու ամփոփելու համար հատկացված 6 ժամից 2-ը հիմնականում իրականացրել եմ ավանդական մոտեցմամբ, ինչը հիմնականում հնարավորություն տվեց համադրել արդյունքները, տեսնել ավանդական և նոր մոտեցմամբ կազմակերպված դասերի առավելություններն ու թերությունները:

Ավանդական դասերի հիմնական խնդիրներն էին՝

1.«Սասնա ծռեր» էպոսի՝ որպես բանահյուսական ժանրի առանձնահատկությունները

2.Էպոսի կառուցվածքն ու ընդհանուր բովանդակությունը, գաղափարը

3.Ճյուղերը, գլխավոր հերոսները

Աշակերտը պիտի կարողանա՝

- ներկայացնել դյուցազներգությունը՝ որպես բանահյուսական տեսակ
- ներկայացնել պատմական հիմքը
- ներկայացնել «Սասնա ծռեր» դյուցազներգությունը՝ որպես առանձին պատումների ամբողջություն, կառուցվածքը, բովանդակությունը:
- արժևորել դյուցազներգությունն ու նրանում արծարծված գաղափարները:

Շեշտը դնելով թեմայի շուրջ գիտելիքների ու հմտությունների ուսուցման վրա՝ ավանդական ձևաչափով դասերն ընթացան բացատրական զննական մեթոդներով: Սրանց հիմքում ընկած էր պատրաստի գիտելիքի պարզ փոխանցումը աշակերտին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:Այսինքն՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված էր ուսուցչից: Նշված դասերի հիմքում դյուցազներգության՝որպես բանահյուսական տեսակի նկարագրությունն էր, կառուցվածքի ու բովանդակության բացահայտումը գաղափարի արժևորումը: Ավանդական մոտեցմամբ կազմակերպված 2-րդ դասաժամին աշակերտներին տրվեց մուտքի քարտ՝ հասկանալու, թե ինչ են յուրացրել սովորողները նախորդ դասերից /Հավելված 2/:

Ստորև ներկայացվում է աշակերտների ակտիվությունը հետազոտության առաջին փուլում:

Գծապատկեր 2



Հաջորդ փուլերում փորձեցինք աշակերտների շրջանում հետաքրքրություն առաջացնել և ուսումնառության նոր մեթոդների կիրառմամբ հասնել ուսումնասիրվող թեմայի վերջնարդյունքին՝ զարգացնելով ինքնուրույնության և պատասխանատվության զգացողությունը, ձևավորել հետազոտելու, ակտիվ համագործակցելու կարողություններ, ձեռք բերել ինքնագնահատման և ինքնակատարելագործման հմտություններ:

Հետազոտության 2-րդ փուլում իրագործվել են հետևյալ ակտիվ մեթոդական հնարները:

«Խճանկար»

Աշակերտները բաժանվել են 5 անդամ ունեցող 4 խմբերի՝ էպոսի ճյուղերին համապատասխան: Յուրաքանչյուր խումբ ստացել է ուսումնասիրության համար իր հանձնարարությունը: Ապա աշակերտները բաշխել են իրենց դերերը խմբերում, պլանավորել իրենց գործունեությունը և աշխատանքի հնարավոր ձևերը: Այնուհետև կատարել են ուսումնասիրություններ, հավաքագրել և վերլուծել տեղեկությունները, խորհրդակցել իրար հետ, մշակել նոր գաղափարներ, կատարել անդրադարձ: Յուրաքանչյուր խումբ սովորել և ներկայացրել է էպոսի իր հատվածը, բայց արդյունքում սովորել է ամբողջ դասը՝ ուշադիր լսելով ու վերլուծելով մյուս խմբերի պատասխանները:

«Զրույց»

Այս մեթոդի հիմնական գործառնությունը մոտիվացիան է , որը կիրառվում է նոր նյութի հաղորդման և ամփոփման ժամանակ: Նպաստում է սովորողի մտավոր գործունեության ակտիվացմանը: Զրույցի միջոցով ուսուցիչը ստեղծում է ազատ, անկաշկանդ միջավայր՝ հիմնվելով սովորողների՝ թեմայի վերաբերյալ ունեցած գիտելիքների վրա:

Առաջադրված հարցերի միջոցով սովորողները ներկայացնում են՝ ինչ է դյուցազներգությունը և ինչ բնորոշումներ ունի՝ զուգահեռ աշխատելով պաստառի վրա, ինչպես նաև «Սասնա ծռեր» էպոսը՝ որպես բանահյուսական ժանր:

Աշակերտը ներկայացնում է, որ էպոսը կամ դյուցազներգությունը էպիկական ժանրի ստեղծագործություն է: Ըստ Մանուկ Աբեղյանի՝ դյուցազնական վեպն ստեղծվում է մի ազգի մեջ այն շրջանում,երբ ազգը նոր է դուրս գալիս բնության՝ իր վրա թողած անսահման ճնշման տակից, երբ որ նա սկսում է մաքառել բնության տարերային ուժերի դեմ, որոնք, ժողովրդի երևակայության մեջ մարդկային կերպարանքի գծագրություն ստացած, արգելքներ են դնում նոր զարգանալ սկսող ազգի առաջ: Ազգը, հետզհետե հաղթելով բնության արգելքներին, նշմարում է իր մեջ ուժ ու զորություն և այդ ուժն ու զորությունն ամփոփում է ոչ հասարակ մարդկանց մեջ, այլ այնպիսի անձնավորությունների մեջ, որոնք ժողովրդի իդեալը, գաղափարն են կազմում. նրանք դյուցազներ՝ դից սերունդ են, ունեն գերբնական ուժ, որ ստանում են

աստվածներից[4]։ Դյուցազներգությունը ներկայացնում է տվյալ ազգի մշակույթը և ազգային առանձնահատկությունները։

Ընդգծում է, որ թեև բանահյուսությունը և գրականությունը խոսքի արվեստ են, սակայն ունեն տարբերակիչ հստակ հատկանիշներ. բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, իր մեջ ներառում է ժողովրդի աշխարհընկալումը, իմաստությունը և դարավոր կենսափորձը, իսկ գրականությունը գրավոր ստեղծագործությունն է և ունի իրեն բնորոշ հատկանիշները։ Մեր էպոսը բանահյուսական հուշարձան է։ Թեև այն 1000 տարի պահպանվել է բանավոր, սակայն ոչ միայն չի մոռացվել, այլև, ընդհակառակը, գնալով հարմարվել է ժամանակին՝ ինչ-որ նոր նրբագծերով հարստանալով, իսկ 19-րդ դարում գրի առնվելով՝ շարունակել և շարունակում է ապրել՝ իր ուրույն և գործուն տեղն ունենալով մեր մշակութային կյանքում։

Նկար 1

Այնուհետև անցում է կատարվում «Սասնա ծռեր»-ին։ Առաջադրվում են այնպիսի հարցեր, որոնք վեր են հանում սովորողների՝ նախորդ ժամերին հետազոտության արդյունքում ձեռք բերած գիտելիքները՝ստեղծելով միջառարկայական կապ«Հայոց պատմություն», «Աշխարհագրություն» առարկաների և «Արվեստի» հետ։

- Ե՞րբ և պատմաքաղաքական ի՞նչ իրադրության մեջ է ստեղծվել հայ ժողովրդական դյուցազներգությունը։
- Ո՞ւմ դեմ էր կռվում հայ ժողովուրդը։
- Որտե՞ղ ծնվեց դյուցազներգությունը և ինչպե՞ս տարածվեց։

[4] Մ. Աբեղյան,Երկեր, Երևան, 1985, էջ 33։

Ինչպես նաև սովորողները հանգամանորեն բացատրում են «պատում» և«ասացող» հասկացությունները՝ներկայացնելով Գ. Սրվանձտյանի և Մ. Աբեղյանի պատումները։Անդրադարձ է արվում նաև 1939 թվականին 60 պատումներից ստեղծված համահավաք բնագրին։ Էպոսի առաջին տարբերակը գրառվել է 1873 թ. և հրատարակվել 1874թ. «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» գրքում։ Էպոսի հայտնաբերողը և գրքի հեղինակը Գարեգին Սրվանձտյանն էր, ով երեք տարի հետամուտ է եղել այն լրիվ իմացող գտնելու համար և միայն 1873 թվականին հանդիպել է Մշո դաշտի Առնիստ գյուղից Կրպոյին։ «Սա կպատմեր, թե,- գրում է Սրվանձտյանը Կրպոյի մասին,- յուր վարպետը շատ ընդարձակ գիտեր այդ պատմությունը, և թե մեջընդմեջ շատ տեղեր ոտանավոր խաղեր կային, որ ձայնով կերգվեր… Այնուամենայնիվ, երեք օր զինքը պահեցի, խնդրեցի, պատվեցի, պարգևատրեցի, և նա ինքզինքը կազդուրելով, պատրաստվելով պատմեց բերանացի, զոր իրեն բարբառով գրի անցուցի»[5]։ 1886 թվականին Մանուկ Աբեղյանը Էջմիածնում Մոկաց Գինեկաց գյուղացի Նահապետից գրի է առնում մեր էպոսի երկրորդ պատումը, որը «դեռ ձեռագիր 1888 թվականին Շուշի քաղաքում կարդում է մի ընկերական գրական երեկոյի ժամանակ»։ Հարց ու պատասխանները պետք է լինեն տրամաբանորեն շաղկապված, որպեսզի ուսուցիչը կարողանա ապահովել աշակերտների մոտ հետաքրքրության պահպանումը։ Մինչ դյուցազներգության ամբողջական կառուցվածքին և բովանդակությանը անցնելը աշակերտները ներկայացնում են էպոսի դյուցազունների հայրենիքը՝ Սասունը։ Նախորդ ժամերին «Խճանկար» մեթոդի կիրառմամբ ուսումնասիրելով և լրացուցիչ տեղեկատվություն հավաքելով Սասունի պատմության, աշխարհագրության վերաբերյալ՝ «Հասկացությունների քարտեզ»-ի միջոցով աշակերտները ներկայացնում են դրանք։

[5] Մ. Մկրյան, Հայ գրականության պատմություն, Երևան, 1976, էջ 335։

Նկար 2



Կարևոր է, որ սովորողներն իմանան դյուցազներգության պատմական հիմքը: Նշվում է, որ «Սասնա ծռեր»-ը ստեղծվել է 8-10-րդ դարերում, երբ հայ ժողովուրդը գտնվում է արարաբական լծի տակ և ազատագրական պայքար էր մղում՝ վերականգնելու իր անկախությունն ու պետական ինքնուրույնությունը:

Ընդգծվում է, որ Դավթի տարած հաղթանակը արաբների դեմ հայ ժողովրդի մղած բազմաթիվ հերոսական կռիվների ընդհանրացումն է. դեռ ավելին, Դավթի տարած հաղթանակը առհասարակ օտար տիրապետության և ֆեոդալական կեղեքման դեմ տարբեր ժամանակներում հայ ժողովրդի մղած պայքարի ու տարած հաղթանակների ընդհանրացումն է[6]:

Քանի որ ծրագրով նախատեսված ժամաքանակի մեծ մասը տրամադրվում է ճյուղերի բովանդակության ընկալմանը, կարդացածը վերարտադրելուն, և նախորդ ժամերից սովորողներն արդեն գիտեն՝ ինչ է դյուցազներգությունը՝ որպես բանահյուսական տեսակ, ամբողջական կառուցվածքն ու ճյուղերի բովանդակությունը, յուրաքանչյուր ճյուղ ամփոփվել է հարցերով ու առաջադրանքներով, նյութի ամփոփման ժամանակ պետք է շեշտադրվեն այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են հերոսների կերպավորմանը, նրանց պայքարի գաղափարական բովանդակությանը, հայրենասիրությանը, ինչի համար ծնվում, ապրում, գործում ու մեռնում են բոլոր հերոսները: Հարցերը պետք է լինեն փոխկապակցված՝ նպաստելով սովորողների ինքնուրույն դատողություններ, եզրահանգումներ ու ընդհանրացումներ անելու զարգացմանը:

[6] Մ. Մկրյան, Հայ գրականության պատմություն, Երևան, 1976, էջ 337:

«Խաչբառ»

Թեմայի ուսուցումը հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու նպատակով, ինչպես նաև մղելով նրանց նոր գիտելիքների ձեռքբերման: Գոյություն ունեն խաչբառների մի շարք տեսակներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Օրինակ՝ խթանման փուլում կիրառվում է խաչբառ, որն իր մեջ ներառում է ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր: Կշռադատման փուլում կարելի է կիրառել խաչբառ տվյալ թեմայի բառարանային պաշարը բարելավելու համար: Քանի որ աշակերտներին տրված է եղել ընթերցել ամբողջ բնագիրը, ուսուցիչը այս փուլում կարդում է որոշ հատվածներ, որոնց մեջ կան բաց թողնված բառեր: Աշակերտները, վերհիշելով ու վերարտադրելով բնագրային հատվածները, լրացնում են խաչբառը /բնագրային հատվածները ներկայացվում են համառոտ/[7]:

Նկար 3



Հորիզոնական

1....Գնաց, հասավ չուր ----------

Ու էնտեղից քշեց, էկավ Դավթի վերա:

5.Էստուց քիչ մի ----------էր դարձե,

Խելք էլ գլուխ չէր մնացե...

6.Սիլա մի զարկեց --------- վազրի

լաճուն, վիզն ծռվեց, մնաց ծուռ...

7.Տեսավ Ծովային ձին, Քուռկիկ

Ջալալին,

Ուղղահայաց

1...Որ էլավ Սանասարի դիմաց,

Տեսավ՝ ---------- էնպես խորոտ էր...

2....Սանասար ասաց.- Այ պապի, անուն

դրվավ, Անուն էղավ ----------:

3.----------որ էղավ ձիավոր՝

Սասուն ոտի տակ տվավ...

4.Էն գիշեր ---------- քնավ, տեսավ էրազ,

Տեսավ, որ իրան էրկու ճրագ կար.

[7] Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Երևան, 1981,359 էջ:

Էնտեղ կապուկ, թամք սադաֆին վերան պատրաստ,
Կեծական ---------- վերան կախած...

Կը գար առջև անցնելուն որ անցներ...
8.... Եբոր ցորեն էղավ քանց ---------- մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն։

Նշենք, որ այս ընթացքում սահիկաշարով կարելի է ցուցադրել էպոսի պատկերազարդումները, տարբեր շարժանկարներ՝ սովորողների մոտ դրական հույզեր ու հետաքրքրություն առաջացնելով։ Այս ամենը կօգնի ուսուցչին դասի ընթացքում ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի։ Շատ կարևոր է, որ սովորողները կարողանան կազմել Սասնա հերոսների տոհմածառը՝ ցույց տալով ժառանգորդական կապերը։ Ցանկալի է, որ տոհմածառը ներկայացնի նաև կին հերոսներին։ Աշակերտները պետք է գիտակցեն, որ էպոսն ստեղծող ժողովուրդն իր լավագույն իդեալները մարմնավորել է ոչ միայն Սասնա դյուցազունների մեջ, այլև դրանց կրողներ է դարձրել կին հերոսներին։ Նրանցից շատերը օժտված են դյուցազնական հատկանիշներով, հայրենասիրությամբ, ժողովրդասիրությամբ, արժանապատվության բարձրզգացումով ու բնավորության ուժեղ գծերով։ Եվ այդ ամենը շաղախված է այն անմնացորդ սիրով ու ջերմ հոգատարությամբ, որ տածում են իրենց սիրելիների նկատմամբ։

Նկար 4

Համագործակցային ունակություններ զարգացնելու, սովորողների ակտիվ գործունեությունը խթանելու համար ուսուցիչը ձևավորում է խմբեր՝ առաջարկելով խմբային աշխատանքի միջոցով կատարել բազմաբնույթ առաջադրանքներ։ Խմբային

աշխատանքի ընթացքում սովորողները փոխանակում են կարծիքներ, արտահայտում սեփական մտքերը, հիմնավորում սեփական տեսակետը, կատարում ընդհանրացումներ։ Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա, խթանում համատեղ մտավոր աշխատանքը, խմբի մաս լինելու գիտակցումը և այլոց նկատմամբ հարգանքը։ Խմբերի միջև առաջանում է առողջ մրցակցություն, ինչը նպաստում է նոր գիտելիքներ ձեռքբերելուն։ Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի։ Խմբերին տրվում են հետևյալ առաջադրանքները։

1-ին խումբ 1.Դյուցազներգության մեջ առկա բոլոր խորհրդանշանները։ 2.ՍասունցիԴավիթը՝ որպես հերոսի տիպար (Տ-աձև աղյուսակի միջոցով ներկայացնել Սասունցի Դավթի բնավորության ուժեղ և թույլ կողմերը)։ 3.Ի՞նչեք կարծում, եկե՞լ է արդյոքՄհերի՝ քարայրից դուրս գալու պահը (հիմնավորել պատասխանը)։ 4.Բացատրել գոռ, խարջ, ղարավաշ բառերի իմաստը։	**2-րդ խումբ** 1.Ջրի պաշտամունքը էպոսի մեջ։ 2.Ի՞նչ նշանակություն ունի էպոսում «ծուռ» բառը, և ի՞նչ սովորեցիր Սասնա ծռերից։ 3.Ի՞նչ կապ եք տեսնում դյուցազներգության և Մովսես Խորենացու հիշատակած առասպելների միջև։ 4.Բացատրել էրթմնակոտոր, իրիշկել, դարգահ բառերի իմաստը։
3-րդ խումբ 1.Ժողովրդական դյուցազներգության գրական մշակումները։ 2.Հայ կինը էպոսում։ 3.Ի՞նչ կապ եք տեսնում մեր և աշխարհի մյուս ժողովուրդների դյուցազներգությունների միջև։ 4.Բացատրել լաճ, մկունդ, դուշման բառերի իմաստը։	**4-րդ խումբ** 1.Ժողովրդական դյուցազներգության և Թումանյանի «ՍասունցիԴավիթ» պոեմի նմանությունն ու տարբերությունը։ 2.Էպոսի արդիականությունը։ 3.Ինչու՞ պիտի Փոքր Մհերը անմահ ու անժառանգ մնար էպոսում։ 4.Բացատրել թեղել, ռանչպար, կալնել բառերի իմաստը։

Աշխատանքի ծանրաբեռնվածության արդարացի բաշխման, միմյանց ցույց տրվող աջակցության, հաղորդակցության ու փոխգործակցության միջոցով թիմերը կատարում են տրված առաջադրանքները սահմանված ժամանակահատվածում և ներկայացնում դրանք: Էպոսի ճիշտ ուսուցումը լուծում է նաև դաստիարակչական խնդիրներ. տեսնելով Սասնա դյուցազունների անսասան ուժը, իմաստությունը, ստեղծարար աշխատանքը, կենսասիրությունն ու լավատեսությունը՝ սովորողը համակվում է հայրենասիրությամբ: Նրա մեջ ձևավորվում են այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը, հարգանքը հայրենի երկրի նկատմամբ, ձևավորվում է հպարտության զգացում նրա անցյալի նկատմամբ: Սովորողները պետք է կարողանան դասեր քաղել պատմական անցյալից, պետք է պատրաստ լինեն դրանց իմացությամբ եղած մարտահրավերներին պատասխան տալուն: Նրանք պիտի ընկալեն, որ Սասնա դյուցազուններից ժառանգած հայրենիքը պիտի շենացնեն, պիտի շարունակեն ապրել, իսկ դրա համար ուժ, կամք և միասնություն է պետք: Էպոսը մեր ինքնության դրսևորումներից մեկն է: Գնահատելով և արժևորելով այն՝ հայ ժողովուրդը պահպանում է իր ինքնությունը այս դժվար աշխարհում, որտեղ հազարավոր միտումներ ու մարտահրավերներ կան:

Ամփոփելով արդյունքները՝ նշվում է, որ «Սասնա ծռեր» էպոսը մեր ժողովրդի ազատասիրության և բարձր մարդասիրական իդեալների վկայականն է: Այն բացառիկ նմուշներից է, որ մարդկությանը հասել է գրի առնվելով անմիջապես ժողովրդական ասացողների բերանից: «Մեր էպոսը,- գրել է Ավ. Իսահակյանը,- գրական մշակումի չի ենթարկվել, գրական միջամտություն չի ունեցել նա, որպի-սին ունեցել են հունական էպոսը, «Շահնամեն», «Նիբելունգների երգը…Մեր վեպը, այսպիսով, բացառապես ժողովրդական ստեղծագործության արդյունք է…» [8] : Միևնույն ժամանակ այն այնպիսի գեղարվեստական կոթող է, որի մեջ փայլում է ժողովրդի ստեղծագործ հանճարը: Ու մինչև այսօր էլ էպոսն իր բարձր հատկություններով ապրեցնում է մեզ: Ահա թե ինչու մեր էպոսն անվանում են «**դարերի հետ խոսող ստեղծագործություն**»: Այն ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվել է համամարդկային մշակութայինարժեք:

[8] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, Երևան,1951, էջ 73:

Համոզվելով, որ նյութը յուրացված է, դասաժամի արդյունքները ամփոփվեց **Microsoft PowerPoint** ծրագրով ստեղծված հարցաշարի միջոցով՝ անդրադարձ կատարելով ամբողջ նյութին:

Նկար 5

Ամփոփման դասին կիրառվեց «Գիտելիքների բուրգը»: Սովորողներին առաջարկվեց ստեղծել իրենց գիտելիքների և հմտությունների բուրգը, այսինքն՝ ինչ սովորեցին և ինչ հույզեր ստացան դասից /Հավելված 3/:

Հետաքրքիր էր դիտարկել աշակերտների ակտիվությունը հետազոտության 2-րդ փուլում:

Գծապատկեր 2



Սովորողներին տրվեց նաև թեստային աշխատանք Quizizz-ի միջոցով մեթոդները կիրառելուց առաջ և հետո, որի արդյունքները ներկայացվում է ստորև:

Գծապատկեր 3



Եզրակացություն

Հետազոտության ամփափումից կարող ենք եզրակացնել, որ գրականության դասավանդման գործընթացում ուսումնառության նոր մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս բարձրացնելու առարկայի դասավանդման արդյունավետությունը՝ օգնելով, որ աշակերտների մոտ զարգանա սովորել սովորելու կարողունակությունը՝ անկախ կարողությունների, ունակությունների և հմտությունների մակարդակից: Նոր մեթոդների կիրառմամբ գիտելիքներն ավելի հեշտ, խոր ու բազմակողմանի են յուրացվում, զարգանում են համագործակցային ունակությունները: Սովորողների համար տեսանելի են դառնում իրենց աճը, կատարելագործումը, նրանք ձեռք են բերում վստահություն սեփական ուժերի նկատմամբ, մշակվում են այնպիսի ունակություններ, կարողություններ, կամային որակներ, որոնք հնարավորություն են տալիս գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն, իսկ սովորելու ընթացքում ձևավորվում է իրողությունները բազմակողմանի և քննադատաբար ուսումնասիրելու, վերլուծելու կամ նոր մոտեցումներ կիրառելու ունակություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան,Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004, 178 էջ:
2. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, Եր., 1951թ.:
3. Հենրիկ Բախչինյան, Սերգեյ Սարինյան, Հայ գրականություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր., 2009թ., 240 էջ:
4. Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Նախաբան, Եր., 1956թ.:
5. Մանուկ Աբեղյան, Երկեր, Եր., 1985թ., 671 էջ:
6. Մկրտիչ Մկրյան, Հայ գրականության պատմություն, Եր., 1976թ., 568 էջ:
7. Նաիրա Տողանյան, Թամարա Թովմասյան, Լիլիթ Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցչի համար, Եր., 2012թ., 112 էջ:
8. Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Եր., 1981թ., 359 էջ:

Հավելված 1

Դասի պլան

Առարկա	Հայ գրականություն
Դասարան	10-րդ բ
Բաժին	«Սասնա ծռեր» էպոսը
Դասեր	**Դաս 1.**Ընդհանուր ակնարկ դյուցազներգության մասին, կառուցվածքն ու ընդհանուր բովանդակությունը **Դաս 2.**Դյուցազներգությունը՝որպես բանահյուսական տեսակ, պատմական հիմքը **Դաս 3** Էպոսի ճյուղերը **Դաս 4.** Գլխավոր հերոսները **Դաս 5-6** Ամփոփում
Թեմա	**Դաս 3.**Էպոսի ճյուղերը, բովանդակությունը
Բաժնի նպատակը	• Ծանոթացում մեր ինքնության ակունքներին: • Գլխավոր գաղափարի ըմբռնում: • Ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակության ընկալում: • Էպոսը՝որպես ժողովրդի համահավաք մտածողության,ձգտումների ու երազանքների արտահայտության ընկալում:
Դասի նպատակը	• Կարողանալ ներկայացնել դյուցազներգության ճյուղերի ամփոփ բովանդակությունը: • Ներկայացնել դյուցազներգությունը՝ որպես բանահյուսական տեսակ: • Արժևորել դյուցաներգությունն ու նրանում արծարծված գաղափարները:
Վերջնաարդյունքներ	• Ներկայացնել ճյուղերի բովանդակությունը: • Վեր հանել հիմնական գաղափարը: • Ուսումնասիրել պատմական ժամանակաշրջանը: • Գնահատել փաստարկները: • Կազմել հիմնական և հարակից գաղափարների աղյուսակ:
Ընդհանրական խաչվող հասկացությունները	**Ժամանակ և տարածություն** Հայրենասիրության և անձնազոհության ընկալումը ժամանակի և տարածության համատեքստում:
Միջառարկայական կապեր	• **Պատմություն –**Հայաստանը 10-րդ

	դարում /արաբական արշավանքներ/ • **Հայոց լեզու**-դյուցազներգության լեզուն և ոճը
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագրքեր, համակարգիչ,տեսանյութեր,մարկերներ,կպչուն թերթիկներ,ելքի քարտեր
Ուսուցման մեթոդներ	«Մտագրոհ», «Խճանկար», «Զրույց», «Հասկացությունների քարտեզ»
Գնահատում	Ձևավորող ու միավորային գնահատում
Դասի ընթացքը	Աշակերտների հաշվառում՝ **1-2 րոպե** Նախորդ նյութի ամփոփում /**մուտքի քարտ/ 7 րոպե** 1. Նշիր 3 բան,որ հիշում են նախորդ դասից: 2. Նշիր 2 բան, որ կարևորում ես: 3. Նշիր 1 բան,որին կուզենայիր այս դասին անդրադառնալ:
Նոր նյութի հաղորդում և ամրապնդում	Ներկայացնել • պատմական ժամանակաշրջանը • էպոսի կառուցվածքը • ճյուղերի բովանդակությունը
Ամփոփում և գնահատում	Ամրապնդել,ամփոփել և գնահատել
Համեմատաբար պասիվ մասնակցություն ունեցած աշակերտների համար նախատեսված հարցեր	• Քանի ճյուղից է բաղկացած դյուցազներգությունը • Ո՞ր ճյուղը ավելի շատ դուր եկավ և ինչու՞: • Ի՞նչ հույզեր ու զգացմունքներ առաջացան դասի ընթացքում:

Դասի պլան

Առարկա	Հայ գրականություն
Դասարան	10-րդ բ
Բաժին	«Սասնա ծռեր» էպոսը
Դասեր	**Դաս 1.**Ընդհանուր ակնարկ դյուցազներգության մասին, կառուցվածքն ու ընդհանուր բովանդակությունը **Դաս 2.**Դյուցազներգությունը՝որպես բանահյուսական տեսակ, պատմական հիմքը **Դաս 3** Էպոսի ճյուղերը **Դաս 4.** Գլխավոր հերոսները **Դաս 5-6** Ամփոփում
Թեմա	**Դաս 6.** «Սասնա ծռեր» էպոսը /ամփոփում/
Բաժնի նպատակը	• Ծանոթացում մեր ինքնության ակունքներին: • Գլխավոր գաղափարի ըմբռնում: • Ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակության ընկալում: • Էպոսը՝որպես ժողովրդի համահավաք մտածողության,ձգտումների ու երազանքների արտահայտության ընկալում:
Դասի նպատակը	• Ամփոփել ձեռք բերված գիտելիքները: • Կարողանալ ներկայացնել դյուցազներգության՝ որպես գրական տեսակի առանձնահատկությունները, դյուցազներգությունը՝ որպես առանձին պատումների ամբողջություն: • Բնութագրել հերոսներին, մեկնաբանել նրանց արարքները: • Արժևորել դյուցաներգությունն ու նրանում արծարծված գաղափարները:
Վերջնաարդյունքներ	• Վեր հանել հիմնական գաղափարը: • Ներկայացնել պատմական ժամանակաշրջանը: • Հիմնավորել փաստարկները: • Կազմել հիմնական և հարակից գաղափարների աղյուսակ: • Ներկայացնել լեզուն և ոճը:
Ընդհանրական խաչվող հասկացությունները	**Ժամանակ և տարածություն** Հայրենասիրության և անձնազոհության ընկալումը ժամանակի և տարածության համատեքստում:
Միջառարկայական կապեր	• **Պատմություն –**Հայաստանը 10-րդ դարում /արաբական արշավանքներ/

	• **Հայոց լեզու**-պատկերավորման միջոցներ • **Արվեստ**- նկարչություն,երաժշտություն
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագրքեր, համակարգիչ,տեսանյութեր,մարկերներ,կպչուն թերթիկներ,ելքի քարտեր
Ուսուցման մեթոդներ	«Մտագրոհ», «Զրույց», «Տ-աձև աղյուսակ»,«Հասկացությունների քարտեզ», «Խաչբառ», «Խմբային աշխատանք»
Գնահատում	Ձևավորող ու միավորային գնահատում
Դասի ընթացքը	Աշակերտների հաշվառում՝ **1-2 րոպե** Նախորդ նյութի ամփոփում /**մուտքի քարտ/ 7 րոպե** **4.** Նշիր 3 բան,որ հիշում են նախորդ դասից: **5.** Նշիր 2 բան, որ կարևորում ես: **6.** Նշիր 1 բան,որին կուզենայիր այս դասին անդրադառնալ:
Նոր նյութի հաղորդում և ամրապնդում	Ամփոփել • պատմական ժամանակաշրջանը • էպոսի կառուցվածքը • ճյուղերի բովանդակությունը • արծարծված գաղափարը Կազմել հիմնական և հարակից գաղափարների աղյուսակ /Տ-աձև աղյուսակ/: **Խմբային աշխատանք** Յուրաքանչյուր խմբի հանձնարարել ճյուղերից մեկը՝ բնագրի շուրջ քարտային աշխատանք կատարելու համար:
Ամփոփում և գնահատում	Ամրապնդել,ամփոփել և գնահատել

Հավելված 2



1. Նշի՛ր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից:
2. Նշի՛ր 2 բան,որ կարևորում ես :
3. Նշի՛ր 1 բան,որին կուզեիր այս դասին կրկին անդրադառնալ :

1. Մեկ ապեմ հայերեն ավելի քան 150 պատում;
2. Հայրենասիրություն
Անկախություն
3. —

1. Նշի՛ր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից:
2. Նշի՛ր 2 բան,որ կարևորում ես :
3. Նշի՛ր 1 բան,որին կուզեիր այս դասին կրկին անդրադառնալ :

1. «Սասնա ծռերը» բաղկացած է չորս երգերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր գլխավոր հերոսը: Մեզ ամենաշատ հետաքրքրող հերոսներն, կրում են «Սասնայոր և Բաղդասար», «ՍՈՒՆԻ ՄԻՆԻՐ», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր» վիպերգերը:
2. հայրենասիրություն
3. Ն. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմին:

1. Նշի՛ր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից:
2. Նշի՛ր 2 բան,որ կարևորում ես :
3. Նշի՛ր 1 բան,որին կուզեիր այս դասին կրկին անդրադառնալ :

1. Պրոպոդևտիկան հերոսները դուրս գնալուց առաջ ինչպես սիրեցին հանդիպում են՝ հարցեր տալով միմյանց կապված:
2. Միայն հերոսներն մեռնում են:
3. Պատմությունում մեծ պայմաններում ն էպոսը չասվեր մնաց:

1. Նշի՛ր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից:
2. Նշի՛ր 2 բան,որ կարևորում ես :
3. Նշի՛ր 1 բան,որին կուզեիր այս դասին կրկին անդրադառնալ :

1. Հայ ժողովրդական դյուցազնավեպը, որ բաղկացած նշանակում դյուցազն ու վիպասացություն են հայ վիպասացները, ներքրդացած է այնպես գրքերգրողների ձեռք: Դյուցազներ են՝ «Սասնայոր և Բաղդասար», «ՍՈՒՆԻ ՄԻՆԻՐ», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»
2. Գաղափար հավերժությունը
Սասնա հերոսների հայրենասիրությունը
3. Հերոսների գահնամա

Հավելված 3


Դրական հույզեր
Օգտակար տեղեկություններ տեքստից
Հետաքրքիր փաստեր տեքստից